ՆԱՋԵԼԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՌԴ-ԻԻՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ներածություն

6+1 ձևաչափում մի շարք անարդյունք բանակցային գործընթացներից հետո[1] 2013 թ. Իրանի միջուկային ծրագրի (ՄԾ)[2]

---

[1] ***Տեղեկանք.*** Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցություններում ներգրավված են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական հինգ անդամները՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան: Մինչև 2006 թ. Իրանի հետ բանակցում էր ԵՄ եռյակը (EU3)՝ Ֆրանսիան, Գերմանիան և Միացյալ Թագավորությունը: Իրանական միջուկային ծրագրի շուրջ բանակցությունները մեկնարկել են 2004 թ., այն բանից հետո, երբ ԱԷՄԳ-ի (Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն) կողմից հայտնաբերվեցին ուրանի հարստացման ցենտրիֆուգներ, որի արդյունքում արևտյան երկրները մեղադրեցին Իրանին «գաղտնի ռազմական միջուկային ծրագիր» զարգացնելու մեջ և պահանջեցին հրաժարվել միջուկային ծրագրից: Թեև 2004 թ. Իրանը ԵՄ եռյակի հետ ստորագրեց համաձայնագիր, իսկ 2004 թ. նոյեմբերին հայտարարեց ուրանի հարստացման ծրագրի դադարեցման մասին, սակայն 2005 թ. Մահմուդ Ահմադինեժադի նախագահական ընտրություններում հաղթանակից հետո պաշտոնական Թեհրանը հայտարարեց միջուկային էներգետիկայի խաղաղ օգտագործման իր իրավունքի մասին՝ վերսկսելով ուրանի հարստացման ծրագիրը: 2004-2006 թթ. ԱԷՄԳ-ի և Իրանի միջև անարդյունավետ բանակցային գործընթացից հետո՝ 2006 թ. Հուլիսին, ԱԷՄԳ-ն Իրանի «միջուկային փաթեթը» հանձնեց ՄԱԿ-ի ԱԽ-ին: Իրանի հետ բանակցությունները շարունակեց միջազգային միջնորդների «վեցնյակը»: 2006-2007 թթ. ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառվեցին պատժամիջոցներ (1737, 1747, 1696 բանաձևերը), 2008 թ. Մարտին և 2010 թ. հունիսին պատժամիջոցները խստացվեցին (1803, 1929 բանաձևերը), որից հետո ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Կանադայի և այլ երկրների կողմից մտցվեցին նաև միակողմանի խիստ պատժամիջոցներ, այդ թվում՝ 2012 թ. Նավթային էմբարգոն: ՌԴ-ի ԱԳՆ-ի հայտարարությամբ Ռու-

խաղաղ կարգավորման խնդիրը որակական նոր փուլ թևակոխեց: 2013 թ. նոյեմբերին Ժնևում կողմերը կնքեցին միջանկյալ համաձայնագիր[3]: Փորձագետների տեսանկյունից ժնևյան հանդիպումներն ուշագրավ էին այն իմաստով, որ ի տարբերություն նախորդ բանակցությունների՝ ընթացան երկկողմ պարտավորությունների ստանձնման նոր մակարդակում, ինչը թափ հաղորդեց կարգավորման ընթացքին և ամրապնդվեց կես տարվա ժամանակահատվածում իրանական միջուկային ծրագրի խաղաղ կարգավորման վերաբերյալ վերջնական համաձայնագիր կնքելու կողմերի հստակ դիրքորոշմամբ: Ի սկզբանե համապարփակ համաձայնագրի կնքումը նախատեսվում էր 2014 թ. գարնանը, այնուհետև հետաձգվեց մինչև նույն թվականի նոյեմբեր[4]: Սակայն, ինչպես ցույց տվեցին զարգացումները, համապարփակ համաձայնագրի փոխարեն նույն թվականի ապրիլի 2-ին Լոզանում կայացած բանակցությունների արդյունքում ներկայացվեց «շրջանակային փաստաթուղթ»: Կողմերը փաստեցին, որ «ձեռք են բերվել լուծումներ՝ համա-

սաստանն Իրանի հետ հարաբերություններում խստորեն հետևել է այն սահմանափակումներին, որոնք սահմանվել են ԱԽ-ի կողմից: Տե՛ս **Գ. Իսկանդարյան**, ԻԻՀ 2008–2010 թթ. արտաքին և ներքին քաղաքական հիմնախնդիրները, Ժամանակակից Եվրասիա I (1), Եր., 2012, էջ 75-81, **Գ. Իսկանդարյան**, Իրանի ներքին ու արտաքին մարտահրավերները, Տարածաշրջանային խնդիրներ, 1/2013, Եր., էջ 19-26:

[2] **В.В. Евсеев**, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013, с. 14-23, В. Головачев - Ядерная программа Ирана: история создания и современное состояние, http://www.centrasia.ru/newsA.php?st=1102939440,

[3] Նոյեմբերի 20-24-ի ժնևյան բանակցությունների արդյունքում ընդունվեց «Գործողությունների միասնական պլանը», որում վեցամսյա ժամանակամիջոցում նախանշվում էին կողմերի գործողությունները: Համաձայնագիրը նախատեսում էր Իրանի կողմից ուրանի հարստացման և պլուտոնի արտադրության ծրագրի փուլային կրճատում միջազգային պատժամիջոցների մասնակի վերացման դիմաց: Implementation of the NPT Safeguards Agreement and Relevant Provisions of Security Council Resolutions in the Islamic Republic of Iran, Report by the Director General, IAEA, Atom for Peace, Board of Governors, 7 November, 2014, p. 2. http://www.isisnucleariran.org/assets/pdf/iaea-iranreport-071114.pdf

[4] Տե՛ս Joint Statement by Catherine Ashton and Iranian Foreign Minister Mohammad Javad Zarif following the talks in Vienna, 24 November 2014, European External Action Service, http://eeas.europa.eu/statements-eeas/2014/141124_02_en.htm

պարփակ պայմանագրի կնքման առանցքային ձևաչափերում», իսկ վերջնական համաձայնագրի կնքումը հետաձգվեց մինչև հունիսի 30-ը[5]:

Եթե ընդհանրացնենք ԻԻՀ ՄԾ-ի վերաբերյալ փորձագիտական շրջանների տեսակետները, ապա մի մասի կարծիքով՝ Իրանի ՄԾ-ն ունի ռազմական բաղադրիչ, և ԻԻՀ-ի կողմից միջուկային զենք ստեղծելու հնարավորության համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ուրանի հարըստացման ծրագրին, որի իրագործման ընթացքում կուտակվել էին բավականին քանակությամբ ուրանի պաշարներ (հարըստացված մինչև 20%), և Թեհրանը կարող է վերահարստացնել այն միջուկային զենքի արտադրության մակարդակի՝ դուրս գալով միջուկային փորձարկումների հարթություն[6]: Այդ դեպքում լուրջ խնդիրներ են առաջանում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ անվտանգության մակարդակներում, որոնցից առաջնայինն են.

1. Իսրայելի կողմից իրանական միջուկային օբյեկտների հավանական հրթիռակոծումը և ԱՄՆ-ից համապատասխան ռազմական օգնությունը, ինչը սկիզբ կդներ անկանխատեսելի ելքով տարածաշրջանային պատերազմի,

---

[5] Տե՛ս Joint Statement By Eu High Representative Federica Mogherini and Iranian Foreign Minister Javad Zarif, April 2, 2015, European External Action Service, http://eeas.europa.eu/statements-eeas/2015/150402_03_en.htm

[6] Իրանն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ է դարձել 1958 թ., 1969 թ. հուլիսի 1-ին ստորագրել է Միջուկային զենքի չտարածման մասին համաձայնագիրը (ՄԶՉՊ), որը վավերացրել է 1970 թ. փետրվարի 2-ին: ՄԶՉՊ IV հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երկիր իրավունք ունի «զարգացնելու հետազոտությունները, միջուկային էներգիայի արտադրությունն ու օգտագործումը բացառապես խաղաղ նպատակներով»: 1974 թ. Իրանը ԱԷՄԳ-ի հետ ստորագրել է «Ոչ միջուկային երկրների համապարփակ երաշխիքների մասին պայմանագիրը», որով ոչ միջուկային պետությունը պարտավորվում է ԱԷՄԳ-ին տեղեկություն տալ երկրում արտադրվող կամ արտահանվող բոլոր միջուկային նյութերի և դրանց տեղակայման մասին: Գործակալության անդամներն իրենց հերթին կարող են ստուգումներ անցկացնել երկրի միջուկային ենթակառուցվածքներում և գնահատել պետության կողմից հրապարակվող տվյալների համապատասխանելիությունը: The Text of the Agreement Between Iran and the Agency for the Application of Safeguards in Connection with the Treaty on the Non-Proliferatio of Nuclear Weapons https://www.iaea.org/sites/default/files/publications/documents/infcircs/1974/infcirc214.pdf

2. գործող միջուկային զենքի չտարածման մասին գլոբալ համակարգի թուլացումը, ինչը կարող է հանգեցնել տարածաշրջանում նոր միջուկային պետությունների առաջացմանը:

Փորձագետների մյուս ծանրակշիռ հատվածը կարծում է, որ ԻԻՀ ղեկավարությունը դեռևս չի ընդունել միջուկային զենքի ստեղծման վերաբերյալ քաղաքական որոշում և ցանկանում է ընթանալ «ճապոնական մոդելով»՝ հասնել այնպիսի գիտատեխնոլոգիական մակարդակի, որը թույլ կտա անհրաժեշտության դեպքում միջուկային զենք ստեղծել մի քանի ամսվա ընթացքում:

ՄԾ-ով պայմանավորված Իրանի նկատմամբ մտցված պատժամիջոցների կենսագործմանը զուգընթաց կրճատվեց իրանական էներգակիրների արտահանումը, գրեթե ամբողջովին արգելափակվեց ԻԻՀ բանկային ոլորտի կապը միջազգային ֆինանսական համակարգի հետ՝ ծայրաստիճան բարդացնելով երկրի առևտրատնտեսական հարաբերությունները և օտարերկրյա ներդրումների հնարավորությունները, հանգեցնելով բարձր գնաճի և ժողովրդի կենսամակարդակի նվազման: Իրանի միջուկային ծրագրի խաղաղ կարգավորման, հետևաբար նաև Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացման հարցը նոր թափ ստացավ 2013 թ. չափավոր պահպանողական գործիչ Հասան Ռուհանիի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո, ում ծրագրի առանցքային բաղկացուցիչներից էին Արևմուտքի հետ երկխոսության ձևաչափի ընդլայնման միջոցով իրանական միջուկային խնդրի խաղաղ կարգավորումը և երկրի տնտեսական առաջընթացի ապահովումը[7]: Իրանի միջուկային խնդրի կարգավորման գործընթացի ակտիվացմանը նպաստեց նաև մերձավորարևելյան ճգնաժամը, որի պայմաններում Իրանը կարողացավ մասամբ հաղթահարել միջազգային մեկուսացումը՝ ձգտելով զարգացնել հարաբերությունները համաշխարհային բոլոր խաղացողների հետ և միջազգային հանրությանն ապացուցեց տարածաշրջանային և աշխարհաքաղաքական կարևոր գործոն լինելու իրողությունը:

[7] Տե՛ս Steven Ditto, Who Is Hassan Rouhani? http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/who-is-hassan-rouhani, В.В. Евсеев, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013, с. 118-143:

2015 թ. հուլիսի 14-ին Վիեննայում շուրջ 13 տարի շարունակվող բանակցային գործընթացի արդյունքում, Իրանի և միջազգային միջնորդ «վեցնյակի» միջև կնքվեց Իրանի միջուկային ծրագրի և պատժամիջոցների վերացման մասին վերջնական համաձայնագիրը */Համատեղ համապարփակ գործողությունների ծրագիրը/*, որով միջնորդներին և Իրանին հաջողվեց համաձայնության գալ Իրանի ՄԾ-ի խաղաղ զարգացման և պատժամիջոցների չեղարկման մեխանիզմների շուրջ: Պայմանագրով ՄԾ-ի հետ կապված ԻԻՀ-ի նկատմամբ մտցված պատժամիջոցների աստիճանական վերացման դիմաց կրճատվելու են Իրանի միջուկային հզորությունները, և փաստացի ճանաչվեց Իրանի խաղաղ նպատակներով միջուկային ծրագիր զարգացնելու իրավունքը[8]:

Ռուս-իրանական զգուշավոր գործընկերության հիմնական շարժառիթները

Ռուսաստանի իրանական արտաքին քաղաքական ուղենիշի ձևավորման հարցում նշանակալի դեր են խաղացել և շարունակում են խաղալ հետևյալ գործոնները.

- Իրանի հետ համագործակցության միջոցով Հարավային Կովկասում, Կասպից ծովում և Կենտրոնական Ասիայում

[8] Համատեղ համապարփակ գործողությունների ծրագրով թեև Իրանի բոլոր միջուկային օբյեկտները պահպանվում են, սակայն Իրանը պարտավորվում է 15 տարվա ընթացքում չհարստացնել ավելի քան 3,67% ուրան, որը չի գերազանցի 300 կգ-ը, 10 տարվա ընթացքում կրճատել ցենտրիֆուգների քանակը երկու երրորդով՝ 19 հազարից հասցնելով 6104-ի, և զարգացնել խաղաղ միջուկային իր ծրագիրը ԱԷՄԳ-ի մշտազննման և վերահսկողության ներքո, որի դիմաց Իրանի վրայից աստիճանաբար հանվելու են այն բոլոր պատժամիջոցները, որոնք մտցվել են Իրանի ՄԾ-ի հետ կապված առևտրի, ֆինանսների, տեխնոլոգիաների և էներգետիկայի ոլորտներում: Ըստ համաձայնագրի, թեև Իրանի նկատմամբ զենքի էմբարգոն 5 տարով կպահպանվի, սակայն ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ որոշակի զինատեսակների մատակարարումներ հնարավոր են նաև այդ ժամանակահատվածում: Համաձայնագրի տեքստը տե՛ս Joint Comprehensive Plan of Action Vienna, 14 July 2015, http://www.eeas.europa.eu/statements-eeas/docs/iran_agreement/iran_joint-comprehensive-plan-of-action_en.pdf, توافق هسته اي: جزئيات مهم بر نامه جامع اقدام مشترک, http://www.bbc.com/persian/iran/2015/07/150715_u01-nuclear-keydeails, برنامه جامع اقدام مشترک, http://www.mfa.gov.ir/uploads/150726-ICPOA-PERSIAN Final-2_56003.pdf

Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը,

- Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգության և կայունության ապահովումը, մասնավորապես Հյուսիսային Կովկասում իսլամական ծայրահեղական խմբավորումների ակտիվացումը թույլ չտալու նպատակով,
- Թեհրանի հետ համագործակցությունը կարևոր պայման է Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցությունը պահպանելու տեսանկյունից: Իրանը Ռուսաստանի համար Մերձավոր և Միջին Արևելքում գրեթե միակ կայուն գործընկերն է,
- Իրանի ՄԾ-ի շրջանակներում Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հետ որոշ առումով դրական երկխոսություն պահպանելու հնարավորությունը,
- իրանական հարցում Արևմուտքի և Իսրայելի կողմից ուժային բաղադրիչի բացառումը, քանի որ Իրանի հետ յուրաքանչյուր բախում կարող է հանգեցնել իրավիճակի ապակայունացման ռուսական «կենսական շահերի» ազդեցության գոտիներում,
- էներգակիրների, մասնավորապես գազի արտահանման եվրոպական ուղղության նկատմամբ ռուսական վերահսկողության սահմանումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո ռուս-իրանական հարաբերությունների դինամիկան ռուսական փորձագիտական հանրության կողմից բնորոշվում է որպես «զգուշավոր գործընկերություն», որի ձևաչափը ենթադրում էր ՌԴ-ԻԻՀ դրական երկխոսության ապահովում, որը կհամապատասխաներ Մոսկվայի շահերին և կապահովեր հարաբերությունների բավարար մակարդակ՝ չվնասելով այլ երկրների հետ հարաբերություններին: Մոսկվայի նման մոտեցումը նախ և առաջ պայմանավորված էր Իրանի միջուկային ծրագրի շուրջ դիրքորոշմամբ և նույն ՄԾ-ի համատեքստում Արևմուտքի հետ հարաբերությունները չսրելու հրամայականով[9]:

Իրանի միջուկային ծրագիրը մշտապես եղել է ռուս-իրանական փոխգործակցության կարևորագույն և զգայուն ոլորտներից մեկը: Ռուսական դիվանագիտությունն Իրանի և նրա ընդդիմախոսների միջև (ոչ միայն ԱՄՆ-ի և Իսրայելի, այլև

[9] Տե՛ս **В.В. Евсеев, В.И., Сажин**, Иран, Уран и ракеты, М., 2009, с. 120-128.

Պարսից ծոցի պետությունների) փորձել է իրականացնել հավասարակշռելու մարտավարություն՝ հստակ գիտակցելով, որ Իրանի հետ յուրաքանչյուր դաշինք կամ սերտ համագործակցություն անխուսափելիորեն կվատացնի հարաբերությունները համաշխարհային առաջատարների հետ[10]: Պաշտոնական Մոսկվայի տեսանկյունից իրանական միջուկային խնդիրը կարող է հանգեցնել «միջուկային դոմինոյի», երբ Իրանի օրինակով միջուկային զենքի ստեղծման հավակնություններ կհայտնեն Թուրքիան, Սաուդյան Արաբիան, ՄԱԷ-ն, Եգիպտոսը և տարածաշրջանային այլ պետություններ: Մոսկվան դեմ է ԻԻՀ-ի կողմից լիարժեք միջուկային վառելիքային ցիկլի ստեղծմանը և անհրաժեշտ է համարում իրանական միջուկային օբյեկտների նկատմամբ ԱԷՄԳ-ի տեսչական վերահսկողությունը: Միաժամանակ Ռուսաստանը պաշտոնապես դեմ է արտահայտվում Իրանի նկատմամբ պատժամիջոցների ուժեղացմանը, այդ թվում՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի շրջանակից դուրս ուժային ճանապարհով խնդրի լուծմանը և գտնում է, որ Իրանի միջուկային ծրագրի սահմանափակումները պետք է ժամանակավոր լինեն, և որ Իրանն իր տնտեսական ներուժով իրավասու է զարգացնելու խաղաղ միջուկային ծրագիր[11]: Ռուսաստանը շահագրգռված է Իրանի միջուկային խնդրի խաղաղ կարգավորման հարցով, ինչը հնարավորություն կտա նրան՝ որպես միջուկային տեխնոլոգիաներ արտահանող տերության և Իրանի հետ միջուկային բնագավառում երկարամյա համագործակցության փորձ ունեցող կողմի, զբաղեցնելու սեփական մասնաբաժինն իրանական խաղաղ միջուկային տեխնոլոգիաների շուկայում:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա Մոսկվայի նկատմամբ Թեհրանի դիրքորոշումը միջուկային խնդրի կարգավորման տեսանկյունից ուղեկցվել է կասկածներով առ այն, որ պատասխանատու պահին Ռուսաստանն Արևմուտքի խոստումների դիմաց կարող է շահարկումների առարկա դարձնել Իրանը: Իրանի մոտեցումը պայմանավորված է ոչ միայն Ռուսաստանի շուրջ ստեղծված բարդ աշխարհաքաղաքական և տնտե-

[10] Տե՛ս **Н. Мамедова**, Взаимные интересы России и Ирана: Историческая эволюция и нынешний этап // Россия и исламский мир: Историческая ретроспектива и современные тенденции, М., 2010, с. 36.

[11] Մանրամասն տե՛ս **С. Саруханян**, Ядерный фактор в российско-иранских отношениях, М., 2007, **В. В., Евсеев**, Перспективы иранской ядерной программы при президенте Хасане Роухани, М., 2013:

սական իրավիճակով, այլև խորը պատմական ենթաշերտ ունի, որը կարծրացած է ինչպես իրանական հասարակության, այնպես էլ քաղաքական էլիտայի մակարդակներում: Եթե հետևում թողնենք XIX և XX դարերի ռուս-իրանական և խորհրդա-իրանական բարդ հարաբերությունները և կենտրոնանանք ԽՍՀՄ-ի փլուզումից մինչև վերջերս այդ երկրների միջև ձևավորված համագործակցության վրա, ապա քաղաքական անախորժ դրվագները, որոնք Թեհրանի կողմից Մոսկվային չվստահելու առիթ են տալիս և շահարկվում են ներիրանական քաղաքական դաշտում, բավականին շատ են՝ ռազմավարական մակարդակի հարաբերություններ ձևավորելու համար: Դրանց թվում են և՛ Գոր-Չերնոմիրդին գործարքը[12], և՛ Կասպից

[12] 1995 թ. մայիսին Մոսկվայում ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնի հետ հանդիպմանը ՌԴ-ի նախագահ Բ. Ելցինը համաձայնվեց մինչև 1999 թ. ավարտել Ռուսաստանի կողմից Իրանին զինատեսակների և ռազմական տեխնիկայի ու ռազմական նշանակության ծառայությունների մատակարարման բոլոր գործարքները և չկնքել նորերը: Ռուսաստանի պարտավորությունները պաշտոնապես հաստատվեցին երկկողմ գաղտնի հուշագրում (արձանագրություն)՝ ՌԴ-ի վարչապետ Վ. Չերնոմիրդինի և ԱՄՆ-ի փոխնախագահ Ա. Գորի ստորագրություններով: Իրանի նկատմամբ ՌԴ-ի պարտավորությունների հիմքում ընկած էին 1989, 1990, 1991 թթ. կնքված չորս միջկառավարական համաձայնագրերը, որոնց հիմնական մասը Ռուսաստանն անավարտ թողեց: Ելցին-Քլինթոն հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի կողմից սուր քննադատության ենթարկվեցին նաև ատոմային ոլորտում համագործակցության մասին ռուս-իրանական 1995 թ. հունվարի 5-ին կնքված արձանագրության դրույթները ստորագրված Բուշեհրի ԱԷԿ-ի կառուցման մասին ռուս-իրանական պայմանագրի հետ համատեղ: Ամերիկյան կողմին հայտնի էր դարձել, որ արձանագրությունը ներառում էր նաև ռազմական բաղադրիչ, որը միջուկային զենքի արտադրության հնարավորություն կտար Իրանին: Խոսքը վերաբերում է Ռուսաստանի կողմից Իրանին միջուկային վառելիքի, ուրանի հարստացման ցենտրիֆուգների և պլուտոնի արտադրության համար ռեակտորների մատակարարմանը, կադրային պատրաստմանն ու տեխնոլոգիական խորհրդատվությանը: Թեև Մոսկվան չհրաժարվեց Բուշեհրի ԱԷԿ-ի կառուցման նախագծից, սակայն Ելցինը համաձայնություն տվեց դադարեցնելու վերոնշյալ բնագավառներում ռուսական օժանդակությունն ու խորհրդատվությունն Իրանին, ինչն էլ ամրագրվեց Վ. Չերնոմիրդինի՝ Ա. Գորին հասցեագրված գաղտնի նամակում: Մանրամասն տե՛ս John P. Barker, Joseph M. DeThomas, The Gore-Chernomyrdin Affair: The testimony before the Senate Foreign Relations Committee, Washington, DC, October 25, 2000, Winter 2001, Vol. 7, No. 1, p. 14-18, **М. Барабанов**, Россия на

ծովի «անարդար բաժանումը»[13], և՛ Բուշեհրի ԱԷԿ-ի ձգձգված կառուցումը[14], և՛ ռազմական ոլորտում, մասնավորապես Ս-300

рынке вооружений Ирана, Журнал «Экспорт вооружений», http://www.cast.ru/journal/2005/5_2005_2/,

[13] Մինչև 1990-ականների առաջին կեսը Ռուսաստանն ու Իրանը Կասպից ծովի իրավական կարգավիճակի և հարակից պետությունների (Ռուսաստան, Իրան, Թուրքմենստան, Ղազախստան, Ադրբեջան) միջև ծովի ընդերքի պաշարների բաժանման հարցում հանդես էին գալիս որպես բնական դաշնակիցներ և, վկայակոչելով 1921 և 1940 թթ. խորհրդա-իրանական պայմանագրերը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ պետությունների և Ռուսաստանի միջև կնքված 1991 թ. Ալմա Աթայի հռչակագիրը, պաշտպանում էին ծովի՝ համատիրության սկզբունքով օգտագործելու գաղափարը: 90-ականների վերջին Ռուսաստանը փոխեց իր դիրքորոշումը և հանդես եկավ Կասպից ծովի ընդերքը «միջին գծով» տնտեսական հատվածների բաժանման հայեցակարգով, որով յուրաքանչյուր պետություն իր հատվածի ընդերքի պաշարները շահագործում է իր հայցողությամբ, սակայն պահպանվում են ծովի մակերեսի ընդհանուր օգտագործման սկզբունքը և վիճելի հանքավայրերի 50:50 բաժանման պայմանը: Կասպից ծովի կարգավիճակի շուրջ Ռուսաստանի, Ադրբեջանի և Ղազախստանի մոտեցումները համընկնում են և ամրագրված են այս պետությունների միջև երկկողմ (Ռուսաստան-Ղազախստան 1998 թ., Ռուսաստան-Ադրբեջան 2001 թ., Ադրբեջան-Ղազախստան 2001 թ.) և եռակողմ (2003 թ.) պայմանագրերով: Ծովի պաշարների բաժանման նշված սկզբունքի համաձայն՝ Ռուսաստանին բաժին է ընկնում ծովի 19 %-ը, Ադրբեջանին՝ 18 %-ը, Ղազախստանին՝ 27 %-ը, իսկ հարավային հատվածի 36 %-ը պետք է բաժանվի Իրանի և Թուրքմենստանի միջև, որից Իրանի մասնաբաժինը կազմում է մոտավորապես 14 %: Սակայն պաշտոնական Թեհրանը գտնում է, որ Կասպից ծովի պաշարները պետք է բաժանվեն հինգ հավասար մասերի (20% մասնաբաժնով): Թեհրանը չի ճանաչում Ռուսաստանի և Ղազախստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի, Ադրբեջանի և Ղազախստանի միջև կնքված երկկողմ պայմանագրերի օրինականությունը: Ինչ վերաբերում է Թուրքմենստանին, ապա վերջինս հակված է պաշտպանելու Թեհրանին՝ ելնելով մի շարք վիճելի հանքավայրերի շուրջը իր և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող սուր տարաձայնություններից: Մանրամասն տե՛ս Yusin Lee, Toward a New International Regime for the Caspian Sea, Problems of Post-Communism;May/Jun2005, Vol. 52 Issue 3, May/June 2005, p. 37-47М. Г. Леухова, А. Е. Пьянов, Проблема правового статуса Каспийского моря в отношениях прикаспийских государств в 1990 – 2000 гг., http://oaji.net/articles/2014/561-1394504630.pdf:

[14] 1995 թ. պայմանագրով Ռուսաստանը Բուշեհրի ԱԷԿ-ի կառուցումը պետք է ավարտեր 1999 թ., սակայն առաջին բլոկի կառուցումն ավարտվեց միայն 2010 թ.:

գործարքի հետ կապված խնդիրները[15], որոնք այսպես թե այնպես միահյուսվել են Իրանի ՄԾ-ի հետ: Ռուսաստանի նկատմամբ անվստահության աճի պատճառներից են նաև Թուրքիայի, Ադրբեջանի ու հատկապես Իսրայելի հետ գործընկերային հարաբերություններր խորացնելու ուղղությամբ ռուսական իշխանությունների քայլերը:

Այսուհանդերձ, աշխարհաքաղաքական իրողություններով պայմանավորված, և՛ Ռուսաստանը, և՛ Իրանը մինչ օրս խնամքով փորձում են պահպանել չխափանվող հարաբերությունների այն ձևաչափը, որը կարող է համապատասխան իրավիճակում ճշգրտվել՝ թույլ տալով կողմերին հակակշռելու ոչ միայն Արևմուտքի, այլև Թուրքիայի քաղաքական և տնտեսական ներկայությունն ինչպես մերձավորարևելյան, այնպես էլ Կովկաս-Կասպիական տարածաշրջաններում: Այսպիսով, ՄԾ-ի խնդրով պայմանավորված Իրանի միջազգային մեկուսացվածության հանգամանքը և աշխարհաքաղաքական ազդեցությունը վերականգնելու Ռուսաստանի ձգտումը գրեթե քառորդ դարի ընթացքում ստիպել է այս երկրներին միմյանց հետ հաշվի նստել միջազգային քաղաքականության խնդիրների բավական լայն շրջանակում՝ փոխադարձ զիջումների և զսպումների ճանապարհով ընդհանրական մոտեցումներ մշակելով.

- ✓ Իրաքի և Աֆղանստանի ճգնաժամերի նկատմամբ,
- ✓ տարածաշրջանում իսլամական արմատականության ակտիվացումը և թմրանյութերի տարածումը կասեցնելու հարցում,
- ✓ Կասպից ծովում ՆԱՏՕ-ի ռազմական ներկայությունը թույլ չտալու համար,

[15] Խոսքը 2007 թ. ռուս-իրանական համաձայնագրի հիման վրա Ռուսաստանի կողմից Իրանին Ս-300 հրթիռային համակարգերի մատակարարման պայմանավորվածության մասին է, որը 2010 թ. ՌԴ-ի նախագահ Դ. Մեդվեդևի հրամանագրով սառեցվեց: Այս ժամանակաշրջանը համընկավ Բ. Օբամայի վարչակարգի կողմից ռուս-ամերիկյան հարաբերությունների վերալիցքավորման քաղաքականության հետ, ինչը նպաստեց 2010 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի Իրանի նկատմամբ տնտեսական ամենախիստ պատժամիջոցների՝ 1292-րդ բանաձևի օգտին Ռուսաստանի կողմ քվեարկելուն: Современные российско-иранские отношения: вызовы и возможности, РСМД, Рабочая тетрадь, N XIV, М., 2014, http://russiancouncil.ru/common/upload/WP14Russia-Iran.pdf , с. 7.

- ✓ Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում ոչ տարածաշրջանային երկրների ներկայությունը սահմանափակելու համար,
- ✓ տրանսկասպիական խողովակաշարերի կառուցման և էներգակիրների արտահանման հարցերում:

Մարտահրավերներ և ռազմավարական գործընկերության հաստատման նոր միտումներ

Ուկրաինական ճգնաժամն ու մերձավորարևելյան զարգացումները զգալիորեն փոխեցին միջազգային հարաբերությունների դինամիկան՝ կանխորոշելով նաև ռուս-իրանական հարաբերությունների ընթացքը: Արևմուտքի հետ հակասությունները հարթելու փորձերում անհաջողության մատնված ՌԴ նախագահ Վ. Պուտինն իր պաշտոնավարման երրորդ ժամանակաշրջանից ի վեր շրջադարձ կատարեց Եվրասիայի երկրների հետ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ՝ առանցքային կարևորություն տալով Իրանին և Չինաստանին:

Չնայած և՛ ռուսական, և՛ իրանական իշխանությունների կողմից երկկողմ հարաբերություններն ամրապնդելու և Միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների ավարտից հետո երկխոսության համար ամուր հենք ձևավորելու միտված գործընթացի ականատես ենք, այնուհանդերձ գոյություն ունեն մի շարք զգայուն գործոններ, որոնք որոշակի անորոշություն են մտցնում այդ պետությունների հարաբերություններում.

1. Իրանի միջուկային խնդրի կարգավորումը և արևմտյան պետությունների հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը կարող է հանգեցնել նավթի և գազի գների ավելի նվազմանը,
2. իրանական վառելիքը հասանելի կդառնա եվրոպական շուկայի համար՝ այլընտրանք ապահովելով ռուսականին,
3. պատժամիջոցների տակ գտնվող Իրանի քաղաքականությունը, մասնավորապես Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում շատ ավելի կանխատեսելի և վերահսկելի էր Ռուսաստանի համար, որը ՄԾ-ի խաղաղ կարգավորման պարագայում կարող է այլ ուրվագիծ ստանալ,
4. Շանհայի համագործակցության կազմակերպությունում Իրանի լիիրավ անդամակցությունը կարող է բերել ուժային հնարավոր վերադասավորության՝ նվազեցնելով

Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը կազմակերպությունում,

5. Իրանի մոտեցումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի և բաժանման խնդիրների նկատմամբ կարող էին խստանալ,
6. ՄԾ-ի պատժամիջոցների թուլացման արդյունքում արևմտյան բիզնեսի ներդրումային աճն Իրանում լրացուցիչ դժվարություններ կստեղծի մրցակցային առումով ավելի թույլ ռուսական ընկերությունների համար,
7. կթուլանա Արևմուտքին հակակշռող Ռուսաստանի աշխարհաքաղաքական գործառույթը՝ նվազեցնելով Ռուսաստանի հետ համագործակցելու Իրանի շահագրգռվածությունը:

Թեև Թեհրանն ու Մոսկվան տևական ժամանակ միասնական են հանդես եկել Տրանսկասպիական գազատարի կառուցման նախագծերի դեմ՝ շեշտադրելով Կասպից ծովի իրավական կարգավիճակի անորոշությունը և այդ նախագծի նկատմամբ մերձկասպյան բոլոր պետությունների համաձայնության անհրաժեշտությունը, սակայն այդ որոշումն ավելի շատ պայմանավորված էր շուկայից այլ մատակարարներին դուրս մղելու ձգտումով և Մերձկասպյան տարածաշրջանում ու Կենտրոնական Ասիայում արևմտյան նախագծերին դիմակայելու սկզբունքով: Աշխարհաքաղաքական նոր վերափոխումների արդյունքում, եթե պատժամիջոցների չեղարկումից հետո Իրանը Եվրոպայի համար վերածվի Ռուսաստանից և Բաքվից էներգետիկ կախվածությունը թուլացնող այլընտրանքի, մեծանում է հավանականությունը, որ Արևմուտքի կողմից տարածաշրջանային էներգետիկ նախագծերը կկենսագործվեն Իրանի մասնակցությամբ:

Այսպիսով, չնայած Մոսկվայի և Թեհրանի միջև Կասպից ծովի ոչ առափնյա պետությունների ռազմական ուժերի ներկայությունը ցրային ավազանում թույլ չտալու հարցում շահերի մեկտեղմանը[16], ամենևին չի նշանակում, որ ԻԻՀ-ն հրաժարվում է հեռանկարում ԵՄ էներգակիրներ արտահանելու գաղափարից: Իրանի էներգակիրների արդյունահանման և փոխադրման ենթակառուցվածքների զարգացման, նոր շուկաների յուրացման, առաջատար տեխնոլոգիաների ներգրավման

[16] Прикаспийский прорыв: саммит в Астрахани открыл путь к разделу моря http://ria.ru/politics/20140929/1026131228.html

նպատակով առանցքային դերակատարում կարող են ունենալ հենց ԵՄ-ը և Չինաստանը: Այդ երկրների տնտեսություններն ի վիճակի են կլանելու թե՛ Իրանի կողմից առաջարկվող գազի ողջ ծավալը, թե՛ անհրաժեշտ տեխնոլոգիական և ֆինանսական միջոցներ տրամադրել ԻԻՀ-ը:

Իրանի ՄԾ-ի բանակցային գործընթացի վերջին փուլում սրվեց նաև Շանհայի համագործակցության կազմակերպությանը (ՇՀԿ) Իրանի լիիրավ անդամ դառնալու հարցը[17]: Թեհրանը գտնում է, որ ՇՀԿ-ի կանոնադրությունը հնացել է ու չի համապատասխանում նոր միջազգային հարաբերությունների իրողություններին, և Ուֆայում հուլիսի 8-9-ը կայացած գագաթաժողովին Հնդկաստանի և Պակիստանի անդամակցության խնդրի լուծումը դիտարկում էր որպես Ռուսաստանի կողմից Իրանին գսպելու և կազմակերպությունում վերջինիս քաղաքական և տնտեսական գերակայությունը թույլ չտալու քայլ[18]: Այս համատեքստում Իրանի ՇՀԿ-ին անդամակցության շուրջ Ռուսաստանի դիրքորոշումը մեծացնում է ՇՀԿ-ից դուրս Իրան-Չինաստան երկկողմ սերտ համագործակցության ակտիվացման հավանականությունը[19]:

Արևմուտքի հետ դիմակայությունն ամրապնդեց Մոսկվայի այն համոզումը, որ Թեհրանի հետ երկխոսության ձևաչափի չընդլայնման դեպքում տարածաշրջանային գործընթացների

---

[17] Ներկայումս Իրանը կազմակերպության դիտորդի կարգավիճակ ունի, իսկ կազմակերպությանն անդամակցելու հայտը ներկայացրել է 2008 թ.: Ըստ կազմակերպության կանոնադրության՝ լիիրավ անդամի կարգավիճակը նախատեսում է կազմակերպության նորմատիվային ակտերի համապատասխանելիություն, այդ թվում նաև հավակնորդ պետության՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի պատժամիջոցների տակ չլինելու պայմանը, որն ընդունվել է 2009 թ. հենց Իրանի համար ռուս-ամերիկյան վերաբեռնավորման քաղաքականության շրջանում:
Iran disappointed with the results of the Moscow meeting of the SCO, http://eng.iran.ru/news/analytics/239/Iran_disappointed_with_the_results_of_the_Moscow_meeting_of_the_SCO

[18] Pros and cons of participation Hassan Rouhani at the SCO summit in Ufa, http://eng.iran.ru/news/analytics/242/Pros_and_cons_of_participation_Hassan_Rouhani_at_the_SCO_summit_in_Ufa, Мезенцев: процесс присоединения Индии и Пакистана к ШОС может быть запущен в Уфе, Санкт-Петербург, 17 июня, http://tass.ru/politika/2048872

[19] Wu Bingbin, China's Contribution to the Comprehensive Solution of Iranian Nuclear Issue, Iran in the Regional and Global Perspective, Report by an international expert group, Editor: Andrey Baklitskiy, M., 2015, p. 22-24.

վրա Ռուսաստանի ներգործության հնարավորությունները կարող են թուլանալ: 2010 թ. ռազմական ոլորտում ռուս-իրանական գրեթե ամբողջությամբ սառեցված համագործակցությունը վերականգնվելու միտում ունի: Չնայած ռուս-իրանական առևտրատնտեսական համագործակցության ցածր ծավալներին[20]՝ Ռուսաստանը փորձում է հաստատուն դիրքեր զբաղեցնել իրանական սպառազինությունների շուկայում: 2015 թ. հունվարին ՌԴ-ի ՊՆ Ս. Շոյգուի՝ Իրան կատարած այցի շրջանակներում կնքվեց ռուս-իրանական ռազմական համագործակցության մասին պայմանագիրը[21]: Ապրիլի 13-ին՝ Իրանի և «վեցնյակի» հետ Լոզանի հանդիպումներից անմիջապես հետո, Վ. Պուտինի կողմից հանվեց 2010 թ. Իրանին հրթիռային համակարգեր վաճառելու վրա դրված արգելքը[22]: Այսպիսով, Ռուսաստանը փորձում է նաև Արևմուտքին ցույց տալ, որ Իրանի հարցում այն զիջումները, որոնց ժամանակին գնացել է, ներկայիս դիմակայության պայմաններում այլևս անիրատեսական են: Ռազմական ոլորտում փոխգործակցության հեռանկարը ԻԻՀ-ՌԴ երկկողմ հարաբերությունների կարևորագույն բաղկացուցիչն է, որով էլ բացատրվում եմ ՄԾ-ի բանակցային վերջին փուլում ռազմական ոլորտում Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկման Մոսկվայի գործադրած ջանքերը[23]: ՌԴ-ն մտադիր է հանդես գալ որպես մերձավորարևելյան ամենաազդեցիկ երկրներից մեկի զենքի մատակա-

[20] Իրանի խոշոր առևտրական գործընկերների շարքում Ռուսաստանը զբաղեցնում է իններորդ տեղը, ընդ որում՝ Ռուսաստանն ութերորդն է ներմուծման ոլորտում, իսկ արտահանման ոլորտում չի մտնում տասնյակի մեջ: Իրանը նույնպես Ռուսաստանի առևտրական գործընկերների տասնյակում չէ: European Union, Trade in goods with Iran, http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113392.pdf, European Union, Trade in goods with Russia, http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/ september/tradoc_113440.pdf

[21] Россия и Иран: вместе против "внерегиональных сил", 20.01.2015, http://www.bbc.com/russian/international/2015/01/150120_russia_iran_cooperation, Шойгу в Тегеране, 20.01.2015, http://ria.ru/analytics/ 20150120/1043452036.html

[22] Внесено изменение в Указ о мерах по выполнению резолюции Совета Безопасности ООН №1929, http://www.kremlin.ru/events/president/news/49248

[23] Лавров: снятие оружейного эмбарго с Ирана должно произойти как можно скорее, 9 июля, http://tass.ru/politika/2105505

րար, հատկապես, որ շիական Իրանի և Ծոցի սունիական պետությունների միջև դիմակայությունն աստիճանաբար ուժեղանում է, իսկ արաբական երկրները սպառազինությունը գնում են հիմնականում Արևմուտքից: Նման պայմաններում Իրանը կարող է դառնալ ռուսական ռազմական արդյունաբերության ամենաձեռնտու գնորդներից մեկը, ինչը ձեռնտու է նաև իրանական ռազմավարներին, որոնք խուսափում են ռազմական ոլորտում արևմտյան տեխնոլոգիաների կախվածությունից:

Իրանի խաղաղ միջուկային ծրագրի զարգացման գործում ևս Ռուսաստանը փորձում է առաջնային դերակատարում ստանձնել: 2014 թ. նոյեմբերին Իրանի և Ռուսաստանի միջև կնքվեց ատոմային էներգիայի ոլորտում համագործակցությունը զարգացնելու մասին նոր համաձայնագրերի փաթեթը, որով նախատեսվում է շարունակել Բուշեհրի ԱԷԿ-ի ևս երկու էներգաբլոկների շինարարությունը, որոնց թիվը Ռուսաստանի հետ համագործակցության միջոցով, նախատեսվում է հասցնել ութի[24]: 2015 թ. հուլիսի 14-ին՝ Վիեննայի համաձայնագրի կնքումից անմիջապես հետո, ՌԴ արտգործնախարարը հայտարարեց, որ Ռուսաստանն ակտիվորեն կմասնակցի միջուկային համաձայնագրով ձեռք բերված պայմանավորվածությունների կենսագործման գործընթացին՝ ինչպես Իրանից հարստացված ուրանի՝ ՌԴ տարածք արտահանելու և դրա դիմաց բնական ուրան մատակարարելու, այնպես էլ հարստացման Ֆորդո օբյեկտը բժշկական և արդյունաբերական արտադրության ձեռնարկության վերագործարկելու աշխատանքներին[25]:

Վիեննայի պայմանագրի համաձայն՝ ԱԷՄԳ-ի կողմից երկրի միջուկային ակտիվության ուսումնասիրության և ռազմական օբյեկտներում ստուգումներ անցկացնելու մասին պահանջները լուրջ սահմանափակումներ են ենթադրում Իրանի միջուկային ենթակառուցվածքների զարգացման համար և կարող են խոչընդոտել պատժամիջոցների արագ վերացումը: Հատկանշական է, որ համատեղ համապարփակ գործողությունների ծրագիրը նախատեսում է նաև պատժամիջոցների

[24] Տե՛ս Иран и Россия подписали пакет соглашений о строительстве восьми энергоблоков АЭС, 11 ноября 2014, http://tass.ru/politika/1564819

[25] Лавров: РФ будет принимать участие во всех этапах реализации соглашения Ирана и "шестерки, 14 июля, http://tass.ru/politika/2118123

«հետադարձման մեխանիզմ», որը թույլ կտա առանց ՄԱԿ-ի ԱԽ-ի վետոյի իրավունքի վերականգնել նախկին պատժամիջոցների փաթեթը[26]: Իրանի ՄԾ-ի շուրջ ամերիկյան Կոնգրեսի և Սպիտակ տան միջև ընթացող երկխոսությունը[27], ինչպես նաև իրանական վարչակարգի նկատմամբ ճնշումներ գործադրելու վերաբերյալ ԱՄՆ-ի քաղաքական հռետորաբանությունը հուշում են, որ Արևմուտքը ձգտում է Իրանի հետ ավելի «ուժեղ» համաձայնագրի հասնել, ինչը դժվար թե նպաստի Իրան-ԱՄՆ հարաբերությունների շեշտակի ջերմացմանը: Ներիրանական քաղաքական դաշտում ևս հակված չեն խոշոր զիջումների գնալ Արևմուտքին, և՛ օրենսդիր և՛ գործադիր, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականության մակարդակով փորձ է արվում ամրապնդելու ռազմական և միջուկային ոլորտ-

[26] تحلیلگر امریکایی: واشینگتن و تهران بعد از توافق هسته ای محتاط خواهند بود http://www.iribnews.ir/NewsText.aspx?ID=683741, Iran After the Deal: What to Do When the JCPOA Expires, https://www.foreignaffairs.com/articles/iran/2015-09-07/iran-after-deal?cid=nlc-twofa-20150910&sp_mid=49519877&sp_rid=bmF6bmF2MjRAZ21haWwuY29tS0,

[27] Սույն թվականի մայիսի 14-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատն ընդունեց մի օրինագիծ, որը պարտավորեցնում էր Սպիտակ տանը Կոնգրեսի քննարկմանը ներկայացնել Իրանի միջուկային ծրագրի մասին վերջնական համաձայնագիրը: Օրինագծի օգտին քվեարկել են Ներկայացուցիչների պալատի 400 անդամ, դեմ են քվեարկել 25-ը: Ավելի շուտ այդ փաստաթուղթը հավանության է արժանացել նաև Սենատի կողմից: Ընդհանուր առմամբ Կոնգրեսը դեմ է համաձայնագրի կնքմանը և կարծում է, որ Թեհրանին չի կարելի վստահել, ուստի օրինագիծը հնարավորություն կտա գնահատելու Իրանի ՄԾ-ի շուրջ կնքված համաձայնագրի արդյունավետությունը և թույլ չի տա կառավարությանը Կոնգրեսին մեկուսացնել իրանական ՄԾ-ի կարգավորման գործընթացից: Մայիսի 22-ին Բարաք Օբաման ստորագրեց Իրանի ՄԾ-ի համաձայնագրի վերջնական տեքստը Կոնգրեսի քննարկմանը ներկայացնելու մասին օրենքը: Քննարկումներից հետո նախագահը 12 օրվա ընթացքում կարող է վետո դնել Կոնգրեսի որոշման վրա, իսկ վերջինս 10 օրվա ընթացքում կարող է վիճարկել այդ որոշումը: Այս ժամանակահատվածում ԱՄՆ-ը չի կարող չեղարկել Իրանի նկատմամբ իր կողմից սահմանված պատժամիջոցները: U.S. lawmakers lay down 'red lines' on Iran nuclear deal, Reuters, Jun 25, 2015, http://www.reuters.com/article/2015/06/25/us-iran-nuclear-congress-idUSKBN0P51FY20150625

Տե՛ս նաև Republican dispute may prevent U.S. Congress vote on Iran deal, 10 sept. 2015, http://thedailyherald.com/index.php?option= com_content&view=article&id=58366:-republican-dispute-may-prevent-us-congress-vote-on-iran-deal&catid=3:news&Itemid=7

ներում ձեռքբերումները[28]: Ընդսմին, Իրանի կողմից համապատասխան զիջումների չգնալու և պատժամիջոցների տնտեսական և ռազմական բաղադրիչների արագ ու ամբողջական չեղարկման պայմաններում, բնական է, որ Իրանը կշարունակի ռուսական կողմի հետ ակտիվ երկխոսության ներկայիս ձևաչափը: Բացի այդ, ԻԻՀ-ի և ՌԴ-ի արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ գործող սիրիական կառավարությանն աջակցելու ու տարածաշրջանային արմատական իսլամական կազմակերպությունների դեմ պայքարելու խնդիրներում մեծապես համընկնում են, ինչն էլ արտահայտվում է Սիրիայում Թեհրանի ու Մոսկվայի միջև ռազմաքաղաքական փոխգործակցության ակտիվացմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուկրաինական ու մերձավորարևելյան ճգնաժամերի շուրջ Արևմուտքի հետ դիմակայության աճի պայմաններում Իրանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների սերտացման ուղղությամբ ջանքեր գործադրելով՝ Ռուսաստանը փորձում է չկորցնել տարածաշրջանում գրեթե միակ կայուն գործընկերոջը, խուսափել միջազգային մեկուսացումից և նվազեցնել արևմտյան պատժամիջոցների արդյունքում ստեղծված ֆինանսական և տնտեսական կորուստները: Իր հերթին Ռուսաստանի հետ հարաբերությունների ակտիվացման միջոցով Թեհրանը փորձում է հավասարակշռել սեփական դիրքերը, հաղթահարել ռազմական և էներգետիկ ոլորտի դժվարությունները, հատկապես, եթե պատժամիջոցների տնտեսական և ռազմական բաղադրիչներն արագ չվերացվեն, և միջուկային գործարքը չհանգեցնի զանկալի արդյունքների: Թեև ակնկալվում է, որ պատժամիջոցների չեղարկումը կուժեղացնի Իրանի դիրքերը համաշխարհային էներգետիկ շուկայում՝ այլընտրանք ապահովելով ռուսական վառելիքին, իսկ արևմտյան պետությունների ու Չինաստանի հետ տնտեսական հարաբերությունների ընդլայնումը կապահովի իրանական տնտեսությունում ներդրումային աճ՝ համաշխարհային առաջանցիկ տեխնոլոգիաների ներգրավմամբ լրացուցիչ դժվարություններ ստեղծելով ռուսական ոչ մրցունակ բիզնեսի համար, այսուհանդերձ ռուս-իրանական

---

28 رژیم صهیونیستی سال دیگر در منطقه وجود نخهند داش/شورای نگهبان با نظارت استصوابی باید صلاحیتها را احرار کند, http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=13583

հարաբերությունների օրակարգն ավելի լայն է: Երկու երկրներն էլ բավականաչափ ներգրավված են Սիրիայի, Իրաքի, Աֆղանստանի, Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի աշխարհաքաղաքական գործընթացներ, որտեղ ըստ ամենայնի կշարունակեն հանդես գալ միասնական ճակատով՝ Արևմուտքին և նրա տարածաշրջանային դաշնակիցներին հակազդելու նպատակով: